ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

6.11.2018
340-11

ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարի տեղակալ Քր. Ասատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Սույն թվականի հոկտեմբերի 8-ին Երիտասարդական միջոցառումների իրականացման կետնրոն ՊՈԱԿ-ի աշխատակիցները ծանուցվել են, որ համաձայն ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 03.10.2018 N1/07/1281-18 գրության երկու ամսվա ընթացքում լուծարվելու է Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը, և որ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերը կազմակերպության լուծարման արդյունքում կհամարվեն լուծված:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Խնդրում եմ տրամադրել ԵՄԻԿ ՊՈԱԿ-ի լուծարման համար իրավական հիմք հանդիսացող կառավարության համապատասխան որոշումը, ինչպես նաև այդ որոշման պաշտոնական հրապարակման էլեկտրոնային հղումը:
2. Խնդրում եմ պարզաբանել, թե որքանով է օրինաչափ (իրավական տեսանկյունից հիմնավորված) 08 հոկտեմբերին աշխատակիցներին ներկայացված ծանուցումը, եթե սույն հարցման 1-ին կետում պահանջվող տեղեկատվությունը՝ Կառավարության համապատասխան որոշումը գոյություն չունի և/կամ պաշտոնապես չի հրապարակվել:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան